# ՀԻՆ ՔՆԱՐ [1]

## ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԵԱՆ

Թագաւոր փառաց խոնարհեալ 'ի հայրական ը ծոցոյ․
Ահաւոր տեսեալ վերընոց ասսկային սքանչացեալ․
Դողացաւ մահ ընդ երևումըն ը քո 'ի յերկրի․
Էկեալ մոգուցն աստեղբ նշանաւ 'ի յայրն․
Ուստի և հովիւք վըկայք ծննդեան քո,
Սրբասաց ձայնիւն աղաղակեն առ քեզ Քրիստոս Աստուած․ փառք քեզ։

## ՄԵՂԵԴԻ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

Թագաւոր փառաց Քրիստոս,
Որք վասն քո անցին ընդ փորձ տանջանաց և ը նեղութեանց․
Դիմեալ 'ի մահ արիաբար վառեալ զինու հաւատոյ, յաղթեցին սրոյ և հրոյ զօրութեան․
Որք և զբաժակ ը մահու արբին ընդ քեզ և զմկրտութիւն արեան ընդ քեզ մկրտեցան և եղեն ը խաչակից քոյոյ կամաւոր չարչարանաց․
Րախճանան այսօր ընդ վերին զուարթունս, քաղցրաձայն երգով ընդ նոսին աղերսեմք, տէր զողորմութիւն քո 'ի յաւիտեան ը ձեռակերտի քո խնամարկեա․
Որով և սոքօք աղաչեմք զքեզ
Սոյին բարեխօսութեամբ զաղօթս ընկալ և ողորմեա։

1 Այս երկու երգոց հեղինակքն են Թադէոս և Թ(է)ոդորոս, ինչպէս կը ցուցընեն սկզբնագիր տողքն և տառքն։ Եւ թէպէտ աս երգչաց ով և որ ժամանակ ըլլալը որոշ չենք գիտեր, բայց գրութեան ոճէն կրնանք կարծել՝ որ չափաւոր հնութիւն ունենան։

digitised by A.R.A.R.@